ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 2

«22» 01 2021 թ. գ. Երևան

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 25.12.2007թ. N 20/3 ՑՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 06.03.2020Թ. ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ ԵՎ 4-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի քննության ժամկետների երկարաձգման պատճառները պարզելու և դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ կառուցակարգեր սահմանելու, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցված և քննվող քրեական գործերով ամփոփ տեղեկություններ ներկայացնելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ դատախազության կոլեգիայի 05.05.2010թ. նիստի արձանագրության 3-րդ հարցի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Երևան քաղաքի, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը, ըստ իրավասության սահմանների, ՀՀ գլխավոր դատախազության (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում (պատճենը՝ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն) ներկայացնել նախորդ ամսվա մնացորդ քրեական գործերի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2) Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն ուղարկել նախորդ ամսվա ընթացքում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի

4-րդ կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցված և քննվող քրեական գործերի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

2. ՀՀ գլխավոր դատախազության դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, կոռուպցիոն հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների ու ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինների պետերին՝

1) Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին ներկայացնել 6 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի (ինչպես հսկողական, այնպես էլ վերահսկողական) վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված N 3-ի (կցվում է):

2) Մինչդատական վարույթում 8 ամսից ավելի ժամանակով քննվող բոլոր քրեական գործերի և 6 ամսից ավելի ժամանակով քննվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի ընթացքն ու նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները քննարկել ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչությունում անցկացվող օպերատիվ խորհրդակցություններում, պարզել նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները և քրեական գործերի ընթացքը լուծելու նպատակով տալ կոնկրետ հանձնարարություններ կատարման հստակ ժամկետներով:

Անցկացված օպերատիվ խորհրդակցությունների արձանագրությունների պատճեններն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3) Նախաքննության ժամկետների ձգձգման ոչ օբյեկտիվ պատճառներ հայտնաբերելու դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

1) Մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը սույն հրամանի 2-րդ կետին համապատասխան ստացված տվյալներից 8 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի վերաբերյալ տեղեկանք ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ համաձայն հավելված N 4-ի (կցվում է):

2) Մինչդատական վարույթում 10 ամսից ավելի ժամանակով քննվող բոլոր քրեական գործերի և 8 ամսից ավելի ժամանակով քննվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի ընթացքն ու նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները քննարկել ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի մոտ անցկացվող օպերատիվ խորհրդակցություններում, պարզել նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները և քրեական գործերի ընթացքը լուծելու նպատակով տալ կոնկրետ հանձնարարություններ կատարման հստակ ժամկետներով:

Միաժամանակ քննարկել նախկինում կայացած օպերատիվ խորհրդակցությունների ընթացքում տրված հանձնարարականների կատարման վիճակը և դրանք չկատարելու, ինչպես նաև նախաքննության ժամկետների ձգձգման ոչ օբյեկտիվ պատճառներ հայտնաբերելու դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

Անցկացված օպերատիվ խորհրդակցությունների արձանագրությունների պատճեններն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

4. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

Մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 6 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի ընթացքի վերաբերյալ զեկուցել ՀՀ գլխավոր դատախազին:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 20/3 ցուցումը և ՀՀ դատախազության կոլեգիայի 06.03.2020թ. նիստի որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետն ու 4-րդ կետը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 1

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի « »
N հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

---------- ամսվա մնացորդ քրեական գործերի քանակի և ընթացքի վերաբերյալ
(հաշվետու ամիսը)

---------- մարզ (վարչական շրջան, կայազոր)
(դատախազության անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմինը	հսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրությունը	ընթացքը
1	2	3	4	5	6	7

Հավելված 2

ՀՀ գլխավոր դատախազի
2021. հունվարի « »
N հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի վերաբերյալ

(հաշվետու ամիսը)

(կառուցվածքային ստորաբաժանման, դատախազության անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմինը	մեղադրանքի առաջադրման ամսաթիվը	հսկող դատախազ	արարքի համառոտ նկարագրությունը	ընթացքը
1	2	3	4	5	6	7	8

Հավելված 3

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի « »
N հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

6 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի վերաբերյալ

_____
(հաշվետու ամիսը)

_____
(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմին	հսկող/ վերահսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրություն	ընթացքը	ժամկետի երկարաձգման պատճառները
1	2	3	4	5	6	7	8

Հավելված 4

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի « »
N հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

8 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի վերաբերյալ

(հաշվետու ամիսը)

(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմին	հսկող/ վերահսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրություն	ընթացքը	ժամկետի երկարաձգման պատճառները
1	2	3	4	5	6	7	8